DocuSign Envelope ID: EA62C99A-FD8D-4D91-9AF2-5E2D97019EFD

Գլենդելի հասարակական կարգադրություն թիվ 2020-05

Գլենդել քաղաքի արտակարգ իրավիճակների ծառայությունների լիազորության ներքո

Արձակման ամսաթիվը՝ 25 մարտի, 2020 թ.

COVID-19-ի դեմ ուղղված քաղաքային միջոցառումներ
(Բնակարանային վարձավճարների բարձրացման սառեցում)

Հաշվի առնելով, որ 2020 թվականի մարտի 16-ին Գլենդել քաղաքի քաղաքային խորհուրդը, համաձայն Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի, հայտարարել է տեղական արտակարգ դրություն, որի անհրաժեշտությունն առաջացել էր «Կորոնավիրուս 2019» (COVID-19) հիվանդության նկատմամբ աճող մտահոգությունից՝ նոր տիպի կորոնավիրուսով պայմանավորված ծանր սուր շնչառական հիվանդության պատճառով: Վիրուսի ախտանիշների թվում են՝ ջերմությունը, հազը և դժվար շնչառությունը, իսկ վարակված անձանց շրջանում տարբեր արդյունքներ են գրանցվել՝ թեթև հիվանդությունից մինչև ծանր հիվանդություն և մահ: Հաստատված դեպքերի քանակը կարճ ժամանակահատվածում շարունակել է կտրուկ աճել: Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոնը (CDC) տեղեկացնում է, որ COVID-19-ը հեշտությամբ տարածվում է մարդուց մարդ, և մշակել է ուղեցույցներ՝ առաջարկելով, որ հասարակությունն ընդունի այնպիսի քաղաքականություն և սահմանված կարգեր, որ հնարավորինս պահպանվի սոցիալական հեռավորությունը: Բացի այդ, 2020 թվականի մարտի 16-ին Քաղաքային խորհուրդը կարգադրեց նաև փակել և մուտքի սահմանափակումներ կիրառել որոշ հասարակական հաստատությունների վրա;

Հաշվի առնելով, որ Գլենդելի քաղաքապետարանը վերստին կրկնապատկել է իր ջանքերը՝ ուղղված ձեռքերի հիգիենայի, շնչառական կանոնների և սոցիալական հեռավորության պահպանմանը: Չափազանց կարևոր է, որ մենք՝ որպես քաղաք, անենք հնարավոր ամեն ինչ՝ դանդաղեցնելու համայնքներում հիվանդության տարածման տեմպերը և խուսափելու մեր բժշկական համակարգի անհարկի ծանրաբեռնվածությունից: Մեր ջանքերին նպաստելու նպատակով՝ արտակարգ դրության պայմաններում Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենի լիազորության ներքո, Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի համաձայն, ինչպես նաև՝ այդպիսի արտակարգ իրավիճակների հետևանքով՝ կյանքի և սեփականության պաշտպանության հետ կապված հարցերի շուրջ կանոնակարգեր և կարգադրություններ կազմելու և արձակելու նպատակով՝ կարգադրվում է մի շարք ժամանակավոր սահմանափակումներ կիրառել Գլենդել քաղաքի որոշ հաստատությունների վրա, որտեղ սովորաբար մեծ թվով մարդիկ են հավաքվում և միմյանց հետ սերտ հարևանությամբ են գտնվում;

Հաշվի առնելով, որ տնտեսվարող սուբյեկտների առաջարկված և պարտադիր փակումը հանգեցրել է եկամտի զգալի կորուստների, որոնք խոչընդոտում են տնտեսվարող սուբյեկտներին՝ պահպանելու աշխատավարձերի, վարկերի և

DocuSign Envelope ID: EA62C99A-FD8D-4D91-9AF2-5E2D97019EFD

կոմունալ վարձերի վճարման իրենց ունակությունը, և կոմերցիոն վարձակալության շրջանում կայունության խթանումը նույնպես նպաստում է հանրային առողջությանը;

Հետևաբար, այժմ՝ ըստ Գլենդելի քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի տրված լիազորության՝ Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենը արձակում է հետևյալ կարգադրությունները, որոնք գործում են այսօր երեկոյան ժամը 11:59-ից մինչև 2020 թվականի ապրիլի 30-ը ժամը 12:00-ն, ըստ որի՝

Բաժին 1. Գլենդելի բնակիչներին այս աննախադեպ արտակարգ դրության պայմաններում օգնություն և պաշտպանություն տրամադրելու նպատակով՝ ըստ Գլենդելի քաղաքային խորհրդի կողմից թիվ 20-33 Որոշման ընդունմամբ նախատեսված կարգով՝ սույնով հրահանգվում է վարձավճարների բարձրացման սառեցում, որն ուժի մեջ է մտնում անմիջապես՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է տրվել վարձավճարի բարձրացման ծանուցումը, ըստ այդմ՝ բնակելի տների վարձակալների համար բոլոր վարձավճարները կմնան նույնը, ինչ սույն Կարգադրության օրվա դրությամբ և տեղական արտակարգ դրության ընթացքում: Արտակարգ դրության ավարտին վարձավճարները բարձրացնելու ցանկություն ունեցող տանտերերը, նահանգային օրենսդրության համաձայն, կներկայացնեն վարձավճարների բարձրացման մասին նոր ծանուցում՝ հստակ նշելով բարձրացրած վարձավճարի սկսելու նոր ամսաթիվը և բարձրացման արժեքը:

Բաժին 2. Սույն կարգադրությունը կարող է երկարաձգվել, նախքան 2020 թվականի ապրիլի 30-ը:

Ամսաթիվ՝ 25 մարտի, 2020 թ.

Ժամը՝ 03:45 P.M.

Ում կողմից՝ _____
Յասմին Ք. Բիրս
Արտակարգ իրավիճակների
ծառայությունների տնօրեն

Որպես ձև ընդունվել է՝
ՄԱՅՔԼ Ջ. ԳԱՐՍԻԱ՝ ՔԱՂԱՔԻ ԴԱՏԱԽԱԶ

Ում կողմից՝ Michael J. Garcia

Պաշտոնը՝ ՔԱՂԱՔԻ ԴԱՏԱԽԱԶ

Ամսաթիվ՝ 25 մարտի, 2020 թ.